Փիրումյան Նինա[1]

ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Խմբային հանցավորության՝ որպես կրիմինալոգիական հասկացության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն է ձեռք բերում խմբային հանցավորության և դրա քրեաիրավական դրսևորումների՝ հանցակցության տարբեր ձևերի հարաբերակցության հիմնախնդիրը:

Խմբային հանցավորության հասկացությունն օրենսդրորեն բացահայտված չէ: Թերևս միայն ՀՀ քրեական օրենսգրքի 64 հոդվածն է, որն օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերի մեջ նշում է նաև խմբակային հանցագործության[2] մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը՝ միաժամանակ չբացահայտելով այդ հասկացության էությունը:

Ուստի, խմբային հանցավորության բովանդակության կանխորոշումը հնարավոր է թվում հանցակցության ինստիտուտը կանոնակարգող քրեաիրավական նորմերի վերլուծության արդյունքում: Այսպես, ՀՀ քրեական օրենսդրությունը տարանջատում է հանցակցության հետևյալ ձևերը՝ մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, կազմակերպված խմբի և հանցավոր համագործակցության կողմից: Ինչպես բխում է վերոնշյալ հոդվածի բովանդակությունից, օրենսդիրը հանցանքը համարում է մի խումբ անձանց (նախնական համաձայնությամբ կամ առանց դրա) կողմից կատարված, եթե հանցակիցները միաժամանակ հանդես են եկել որպես օբյեկտիվ կողմի կատարողներ, այսինքն՝ համակատարողներ:

---

[1] ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. թ., դոցենտ Տ. Վ. Սիմոնյան:

[2] Թեև օրենսդիրն օգտագործել է «խմբակային» եզրույթը, ավելի ճիշտ է թվում «խմբային» բառի գործածումը, քանի որ խոսքը անձանց խմբի կողմից հանցանքի կատարմանը մասնակցելու, այլ ոչ թե խմբակի մասին է:

Ձեռնպահ մնալով օրենսդրի այս մոտեցման հիմնավորվածությունը քննարկելուց, որով հանցակցության վերոնշյալ ձևերը սահմանափակվում են միայն համակատարման դեպքերով՝ հարկ ենք համարում նշել, որ կրիմինալոգիական ուսումնասիրության տեսանկյունից երևույթի նկատմամբ հետաքրքրությունն ու դրա նշանակությունը թերևս օրենսդրական բնորոշումից զատ պայմանավորված են մի շարք այլ հանգամանքներով ևս[3]:

Կրիմինալոգիական ուսումնասիրության օբյեկտներն ընդհանրապես, խմբային հանցավորությունը մասնավորապես, հետաքրքրություն են ներկայացնում այնքանով, որքանով դրանք պայմանավորված են ծագման առանձնահատուկ պատճառներով և պայմաններով, դրսևորման առանձնահատկություններով, որոնք և կանխորոշում են կանխարգելման հիմնական ուղղությունների բացահայտումն ու վերհանումը: Այլ կերպ ասած, խնդրո առարկա խմբային հանցավորության՝ որպես կրիմինալոգիական հետազոտության օբյեկտի ուսումնասիրության արդիականությունն ու կարևորությունը առաջին հերթին պայմանավորված են այն հանգամանքով, որ հանցավոր գործունեություն է ծավալվում ոչ թե մեկ անձի կողմից, այլ մի քանի անձանց համատեղ ջանքերի ներդրման, նրանց միջև որոշակի սուբյեկտիվ կապերի առկայության և համագործակցության շնորհիվ: Ինչպես արդարացիորեն նշվում է կրիմինալոգիական գրականության մեջ, խմբային հանցավորության՝ որպես ընդհանուր հանցավորության ինքնուրույն տեսակի բնորոշումը սեռային հատկանիշներից բացի պետք է տրվի վերջինիս տեսակային տարբերակման հիման վրա[4]: Մեր համոզմամբ, որպես այդպիսին խմբերում միավորված անձանց համատեղ հանցավոր գործունեությունն է:

Այս տեսանկյունից պետք է նաև համաձայնել իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետի հետ, ըստ որի՝

---

[3] Հարկ է նկատել, որ արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությունը հանցակցության առանձին ձևերը չի կարգավորում (օրինակ՝ Գերմանիա, Հունգարիա): Ֆրանսիայում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է երկու կամ ավելի անձանց կողմից հանցանքի կատարումը, որոնք գործել են որպես կատարողներ կամ որպես այլ հանցակիցներ: Իսկ օրինակ, Մոլդովայում հանցակցության ձև է համարվում ոչ միայն պարզ հանցակցությունը (համակատարում), այլև բարդ հանցակցությունը:

[4] Տե՛ս **Шеслер А. В.,** Групповая преступность: криминологические и уголовно-правовые аспекты: Дис. ... док. юрид. наук. Екатеринбург, 2000, էջ 17:

կրիմինալոգիական հասկացությունները չեն կանխորոշվում քրեական իրավունքով. այս գիտությունների կողմից գործածվող նույն եզրույթներն ունեն իրենց ուրույն բովանդակությունը: Այդ իսկ պատճառով էլ քրեաիրավական հասկացությունները չեն կարող մեխանիկորեն բերվել և ուսումնասիրվել կրիմինալոգիական հարթության վրա[5]:

Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ թեև քրեական օրենքը հանցանքը որպես մի խումբ անձանց կողմից (խմբային հանցավորության առավել պարզ դրսևորումը) կատարված որակելու պարտադիր պայման է համարում համակատարումը, այնուամենայնիվ կրիմինալոգիայի տեսանկյունից որոշակի հետաքրքրություն կարող են ներկայացնել և խմբային հանցավորության սահմաններում դիտարկվել նաև հանցավոր համատեղ գործունեության այն դեպքերը, որոնք քրեական իրավունքում անվանվում են ընդհանուր (բարդ) հանցակցություն:

Վերոնշյալ պնդումը, սակայն, միանշանակ չի ընկալվում կրիմինալոգիական գրականության մեջ: Այսպես, մի խումբ հեղինակներ «խմբային հանցավորություն» եզրույթն ավելի նեղ են մեկնաբանում՝ այն նույնացնելով հանցակցության կոնկրետ տեսակի՝ համակատարման հետ: Այս դիրքորոշումն առավելապես հիմնավորվում է նրանով, որ խմբային հանցավորությունն արտացոլում է հենց համակատարման օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների համադրման որակական ինքնատիպությունը[6]:

Այս տեսակետը, որով խմբային հանցավորությունը նույնացվում է համակատարման հետ, մի շարք այլ հեղինակների կողմից հիմնավորվում է նաև նրանով, որ հանցակցության ոչ բոլոր դրսևորումներն են աչքի ընկնում հանրային բարձր վտանգավորությամբ, այլ հենց խմբային հանցավորությունն է (հանցանքի կատարումը մի խումբ անձանց կողմից) որպես հանցագործության ծանրացնող հանգամանք ազդում հանրային վտանգավորության աստիճանի վրա[7]:

---

[5] Տե՛ս **Курганов С. И.,** О стереотипах в криминологии // Государство и право. 1998. N 1, էջ 61-62:

[6] Տե՛ս **Галиакбаров Р. Р.,** Совершение преступления группой лиц. Учебное пособие. Омск, 1980, էջ 30 – 34:

[7] Տե՛ս **Гришаев П. И., Кригер Г. А.,** Соучастие по уголовному праву. М., 1959:

Մեր համոզմամբ, խմբային հանցավորության նման նեղ մեկնաբանումը և նույնացումը համակատարման ինստիտուտի հետ հիմնավորված չեն այն պատճառաբանությամբ, որ այդպիսով չի բացահայտվում խմբային հանցավորության՝ որպես կրիմինալոգիական կատեգորիայի իրական բովանդակությունը, և համատեղ հանցավոր գործունեության շատ դրսևորումներ քննարկվող հասկացության սահմաններից դուրս են մնում: Բացի այդ, հեղինակների այն պնդումները, որ հանցակցության ձևերից միայն համակատարումն է բարձրացնում արարքի հանրային վտանգավորությունը, որը և պետք է դառնա կրիմինալոգիական ուսումնասիրությունների օբյեկտ, հիմնավոր չեն թվում: Կարծում ենք, որ արարքի կատարումը մի խումբ անձանց կողմից՝ անկախ նրանից, թե այն դրսևորվում է համակատարման կամ ընդհանուր հանցակցության ձևով, առաջին հերթին նպատակ ունի ապահովելու հանցավոր գործունեության բարեհաջող ավարտը և հանցավոր նպատակի իրագործումը, հետևաբար բնորոշվում է առավել բարձր հանրային վտանգավորությամբ: Այս տեսանկյունից առավել հիմնավոր է թվում խմբային հանցավորության շրջանակներում հանցակցության քննարկվող ձևի բոլոր դրսևորումների ուսումնասիրությունը՝ անկախ դրանց քրեաիրավական կարգավորումից:

Խմբային հանցավորությունը միայն համակատարման դեպքերով սահմանափակելն անարդարացիորեն նեղացնում է վերջինիս սահմանները՝ դրա շրջանակներից դուրս թողնելով փաստացի խմբի կողմից կատարված հանցանքները, որոնք քրեական օրենսդրությամբ համակատարում չեն համարվում: Խոսքը մասնավորապես հատուկ սուբյեկտով հանցագործություններում փաստացի համակատարման դեպքերի մասին է:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 39 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող: Օրենսդրական այս կարգավորումը, փաստորեն, բացառում է արարքը որպես մի խումբ

անձանց կողմից կատարված որակելն անգամ այն դեպքերում, երբ այն փաստացի կատարվել է երկու կամ ավելի անձանց անմիջական և համատեղ մասնակցությամբ (առկա է եղել փաստացի համակատարում), որոնցից, սակայն, միայն մեկն է օժտված եղել հատուկ սուբյեկտի հատկանիշներով: Վերոնշյալ բոլոր դեպքերն ըստ օրենսդրի մոտեցման ընդհանուր հանցակցության դրսևորումներ են: Հետևաբար, ստացվում է, որ խմբային հանցավորության նեղ ընկալումը հնարավորություն չի տալիս վերջինիս շրջանակներում դիտարկել և կրիմինալոգիական հարթության վրա ուսումնասիրել հանցակցության վերոնշյալ դեպքերը: Մինչդեռ, գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ հատուկ սուբյեկտի հատկանիշների բացակայությունը որևէ ազդեցություն չի ունենում այդ հատկանիշները չունեցող հանցակցի հանցավոր ակտիվության և խմբի հանցավոր գործունեությանը նրա լիարժեք մասնակցության վրա: Այլ կերպ ասած, այն հանգամանքը, որ հանցակիցներից միայն մեկն է օժտված եղել հատուկ սուբյեկտի հատկանիշներով, դեռևս չի վկայում խմբային հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների բացակայության մասին:

Կրիմինալոգիական գրականության մեջ խմբային հանցավորության և հանցակցության հարաբերակցության հարցում ներկայացվել են նաև այլ դիրքորոշումներ: Այսպես, գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ հանցակիցների համապատասխան գործողությունների արդյունքում ձեռքբերված նախնական համաձայնությունն է վկայում խմբային հանցագործության՝ որպես նեղ իմաստով հանցակցության առկայության մասին[8]: Խմբային հանցագործության այս բնորոշումից պարզ է դառնում, որ հեղինակը հանցավոր խմբի գոյության պարտադիր պայման է համարում հանցակիցների միջև նախնական համաձայնության առկայությունը՝ այդպիսով խմբային հանցավորության մեջ չներառելով հանցակցության ձևերից մեկը՝ հանցանքի կատարումը մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության:

---

[8] Տե՛ս **Алексеев С. В.,** Проблемы укрепления законности и правопорядка. Вестник Челябинского государственного университета. 2010. № 9 (190). Право. Вып. 23. էջ 54:

Մեր համոզմամբ, նման մոտեցումը ևս անարդարացիորեն նեղացնում է խմբային հանցավորության շրջանակները: Ընդունելի է, որ խմբի հանցավոր գործունեությունն աչքի է ընկնում առավել բարձր հանրային վտանգավորությամբ, երբ այն ծավալվում է դեռևս հանցագործության նախապատրաստության փուլում: Ասվածը, սակայն, նախնական համաձայնությունը՝ որպես խմբի առկայության պարտադիր պայման համարելը որևէ կերպ չի արդարացնում: Հանցակցության այս ձևը նախնական համաձայնությամբ խմբից թերևս տարբերվում է միայն նրանով, որ հանցակիցների համատեղ գործունեությունը ծավալվում է հանցանքի անմիջական կատարման փուլում: Եվ վերջապես, մեր տեսակետը հիմնավորվում է նաև գործող օրենսդրական կարգավորմամբ, որով ինքնուրույն քրեաիրավական գնահատական է տրվել առանց նախնական համաձայնության մի խումբ անձանց կողմից հանցանքի կատարմանը՝ որպես հանցակազմի, իսկ Քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված չլինելու դեպքում՝ որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի:

Կրիմինալոգիական գրականության մեջ խմբային հանցավորության ավելի լայն սահմանման կողմնակիցները ևս միասնական չեն իրենց դիրքորոշման մեջ: Այսպես, տեսության մեջ փորձ է արվել համակատարման հասկացության սահմաններում դիտարկելու մի քանի անձանց կողմից հանցագործության օբյեկտիվ կողմի կատարման բոլոր դրսևորումները, ներառյալ այն դեպքերը, երբ անձանցից միայն մեկն է հանդես գալիս որպես հանցագործության սուբյեկտ, իսկ մյուսները այդպիսին չեն համարվում քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կամ անմեղսունակության պատճառով: Որպես այս դիրքորոշման հիմնավորումորոշ հեղինակներ նշում են, որ թեև տվյալ իրավիճակում համակատարում առկա չէ, այդուհանդերձ արարքը կատարվում է խմբային եղանակով, ինչը ներառում է նաև անմեղսունակի կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի մասնակցության դեպքերը: Այս հեղինակների կարծիքով՝ թեև հանցագործության կատարման այս խմբային եղանակը հանցակցություն չի կարող համարվել, քանի որ պարունակում է միայն հանցակցության օբյեկտիվ հատկանիշներ, այդուհանդերձ

այն էականորեն բարձրացնում է արարքի հանրային վտանգավորությունը: Ուստի, վերջիններս առաջարկում են որպես ծանրացնող հանգամանք նախատեսել հանցանքի կատարման խմբային եղանակը առանց հանցակցության հատկանիշների[9]: Կրիմինալոգիական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ հանցագործության միջնորդավորված կատարումն առաջ է բերում խմբի կազմում ընդգրկված անձանց միջև համապատասխան միջանձնային հարաբերություններ (հոգեբանական կապ, գործողությունների համաձայնեցում և այլն), ընդ որում այդ հարաբերություններն իրենց խորությամբ և բարդությամբ կարող են նույնական լինել հանցակիցների միջև առկա փոխհարաբերությունների հետ[10]:

Այս դիրքորոշումը քննադատության է արժանացել մի շարք այլ հեղինակների կողմից: Կրիգերը նշում է, որ համակատարում կարող է լինել միայն հանցագործության սուբյեկտների մասնակցությամբ, ովքեր ենթակա են քրեական պատասխանատվության. անմեղսունակները և մանկահասակները չեն կարող խումբ ձևավորել: Իսկ Տելնովը իր տեսակետը հիմնավորում է նրանով, որ հանցավոր գործունեությանը հանցագործության սուբյեկտ չհանդիսացող անձանց մասնակցության պարագայում բացակայում են արարքի հանրային վտանգավորությունը բարձրացնող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, և հետևաբար բացակայում է խմբային հանցավորությունը:

Մեր համոզմամբ, այն հանգամանքը, որ հանցանքի կատարմանը ներգրավվում է քրեական պատասխանատվության տարիքի չհա-

---

[9] Տե՛ս **Галиакбаров Р. Р.,** Групповое преступление. Постоянные и переменные признаки. Свердловск: Изд-во Свердл. юрид. ин-та. 1973, էջ 118-120; **Михеев Р. И.,** Уголовно-правовая оценка общественной опасности деяний невменяемых при групповых преступлениях //Актуальные проблемы борьбы с групповой преступностью. Омск: Изд-во Ом. высш. шк. милиции. 1983, էջ 16-19; **Сабитов Р. Д.,** Уголовно-правовая борьба с насильственными групповыми посягательствами: Автореф. дис. ... канд. юрид. наук. Свердловск, 1980, էջ 8-9; **Галиакбаров Р. Р.,** Групповое преступление. Постоянные и переменные признаки. Свердловск: Изд-во Свердл. юрид. ин-та, 1973, էջ 118-120; **Михеев Р. И.,** Уголовно-правовая оценка общественной опасности деяний невменяемых при групповых преступлениях //Актуальные проблемы борьбы с групповой преступностью. Омск: Изд-во Ом. высш. шк. милиции. 1983, էջ 16-19; **Сабитов Р. Д.,** Уголовно-правовая борьба с насильственными групповыми посягательствами: Автореф. дис.... канд. юрид. наук. Свердловск, 1980, էջ 8-9:

[10] Տե՛ս **Шеслер А. В., Калугин А. Г.,** Соучастие в преступлении: вопросы, квалификация и тактика доказывания. 2000:

սած անձը կամ անմեղսունակը (այսպես կոչված միջնորդավորված կատարում), դեռևս չի վկայում հանցանքի հանրային բարձր վտանգավորության բացակայության մասին: Այլ հարց է, որ նշված դեպքերում արարքի բարձր հանրային վտանգավորությունը պայմանավորվում է ոչ թե խմբի համատեղ հանցավոր գործունեության ծավալման հանգամանքով, այլ վճռորոշ է դառնում կատարողի կողմից հանցանքն առավել վտանգավոր եղանակով՝ քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձանց միջոցով կատարելը, ինչը և հաշվի է առնվում վերջինիս քրեական պատասխանատվության և պատժի հարցը որոշելիս: Այս տեսանկյունից, թերևս որոշակի տարբերակման անհրաժեշտություն է առաջանում հանցանքի կատարմանը անմեղսունակների ներգրավման և անչափահասների մասնակցության դեպքերի միջև:

Այսպես, անմեղսունակների մասնակցությամբ հանցանքը կատարելու դեպքերում վերոնշյալ դիտարկումը թերևս ճիշտ է այն հիմնավորմամբ, որ անմեղսունակը, ով ունակ չէ գիտակցելու իր արարքի բնույթն ու հանրային վտանգավորությունը, որպես խմբի լիարժեք անդամ չի կարող համատեղ գործել այլ անձանց հետ՝ ապահովելով վերջիններիս հետ մտավոր և հոգեբանական կապ:

Կարծում ենք, իրավիճակը որոշակիորեն փոխվում է օրենքով սահմանված քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց մասնակցությամբ հանցանքը կատարելու դեպքերում: Ինչպես արդարացիորեն նշվում է կրիմինալոգիական գրականության մեջ, թեև միջնորդավորված կատարման դեպքում անչափահասը ծառայում է որպես հանցանքը կատարելու «գործիք», այդուհանդերձ չեն բացառվում այնպիսի իրավիճակներ, երբ վերջինս գործի որպես խմբի լիարժեք անդամ: Վերջին դեպքում, տարիքը անչափահասին քրեական պատասխանատվության չենթարկելու զուտ ձևական իրավական հիմք է[11]: Այս առումով, դժվար է հերքել այն փաստը, որ այն դեպքերում, երբ հանցավոր խմբի անդամների տարիքը շատ մոտ է քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքային շեմին, խումբը հանցավոր գործունեություն ծավալելու առավել մեծ հնարավորություններ և, հետևաբար առավել բարձր հանրային

[11] Տե՛ս **Хмелевская Т. А.,** Виды групповых преступлений и их квалификация по УК РФ. Дис. … канд. юрид. Наук, М., 2000:

վտանգավորություն է ձեռք բերում: Այս տեսանկյունից ելակետային է դառնում այն հարցի պարզաբանումը, թե որն է համարվում այն նվազագույն տարիքը, որի դեպքում անչափահասը կհամարվի հանցավոր խմբի անդամ: Այս հարցի հետ կապված՝ կրիմինալոգիական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ հանցանք կատարած անչափահասը այդպիսին չի դառնում հանկարծակի՝ հանցագործության կատարման պահին: Հանցանք կատարած անձի հակասոցիալական հատկանիշները ձևավորվում են աստիճանաբար, քրեորեն պատժելի արարքի կատարումից շատ ավելի վաղ, որը և հիմք է ստեղծում վերջինիս՝ որպես հանցավոր անձի որակապես նոր սոցիալ-իրավական գնահատականի համար[12]: Վերոնշյալ դիրքորոշման հետ համաձայն լինելով հանդերձ կարծում ենք, այնուամենայնիվ, որ անթույլատրելի է քրեական պատասխանատվության տարիքի նվազագույն շեմ սահմանել՝ հիմք ընդունելով անձի հակասոցիալական կողմնորոշման ձևավորման գործընթացի սկզբնական փուլը: Մեր համոզմամբ, այդպիսին պետք է լինի այն տարիքը, որի պարագայում անչափահասն ունակ լինի ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական և մտավոր զարգացման ուժով գիտակցելու իր հանցավոր վարքագծի ողջ էությունն ու դատապարտելիությունը, պատասխան տալու իր արարքների համար:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 24 հոդվածը քրեական պատասխանատվության ընդհանուր տարիք է սահմանում 16 տարին, իսկ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ 14 տարին[13]: Ենթադրվում է, որ քրեական պատասխանատվության տարիք սահմանելիս օրենսդիրն առաջնորդվել է այն կանխավարկածով, որ հենց այդ տարիքից սկսած՝ անչափահասն ունակ է լիարժեք գիտակցելու իր արարքի բնույթն ու նշանակությունը և կառավարելու այն: Այդուհանդերձ, կարծում ենք, որ նորագույն տեխնոլոգիաների զարգացման և դեռահասների վաղ հասունացման պայմաններում գործող օրենս-

---

[12] Տե՛ս **Миллер Л. И.,** Противоправное поведение несовершеннолетних. Киев. 1985, էջ 113:

[13] Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների մեծ մասի օրենսդրությամբ սահմանված է քրեական պատասխանատվության տարիքի ավելի ցածր շեմ: Ֆրանսիայում որպես այդպիսին սահմանված է 13 տարեկանը, Գերմանիայում և Ճապոնիայում՝ 14, Իռլանդիայում՝ 10-12, Պորտուգալիայում՝ 12, Նոր Զելանդիայում՝ 10:

դրական կարգավորումը լիարժեք կերպով չի արտացոլում ներկայիս իրողությունը: Այս տեսանկյունից թերևս հիմնավոր ենք համարում խմբային հանցավորության շրջանակներում ուսումնասիրության առարկա դարձնել նաև քրեական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասների մասնակցությամբ հանցավոր խմբերի գործունեությունը[14]:

Խմբային հանցավորության սահմանների կանխորոշման տեսանկյունից կարևորություն է ներկայացնում նաև խմբային հանցավորության և կազմակերպված հանցավորության (հանցանքի կատարումը կազմակերպված խմբի և հանցավոր համագործակցության կողմից) հարաբերակցության հարցի քննարկումը:

Խմբային հանցավորության և կազմակերպված հանցավորության հարաբերակցության վերաբերյալ կրիմինալոգիական գրականության մեջ միանշանակ մոտեցում ձևավորված չէ: Այսպես, Շեսլերը նշում է, որ կազմակերպված հանցավորությունը խմբային հանցավորության տեսակ է, քանի որ վերջինիս գոյությունը պայմանավորված է խմբային հանցավորության երեք տարրերով՝ հանցավոր խմբեր, խմբային հանցագործություններ և այն կատարող անձինք[15]: Մեկ այլ հեղինակի կողմից կազմակերպված հանցավորությունը բնորոշվում է որպես խմբային պրոֆեսիոնալ հանցավորության որակապես նոր մակարդակ, որը բնորոշվում է հստակ ձևավորված կառուցվածքով, ողջ քրեական և տնտեսական հանցավորության նկատմամբ ունեցած ազդեցությամբ և կոռումպացված պաշտոնյաների հովանավորչությամբ[16]:

Խմբային և կազմակերպված հանցավորության հարաբերակցության հարցում գրականության մեջ արտահայտվել է նաև հակառակ դիրքորոշումը: Այսպես, մի խումբ հեղինակներ տարբերակում են «խմբային հանցավորություն» և «կազմակերպված հանցավորություն» հասկացությունները՝ համապատասխանաբար առաջին դեպ-

---

[14] Խոսքն առավելապես վերաբերում է 14 տարին լրացած անչափահասների մասնակցությանն այն հանցագործություններում, որոնց համար քրեական պատասխանատվության տարիք է սահմանված 16 տարին:

[15] Տե՛ս **Шеслер А. В.,** Групповая преступность: криминологические и уголовно-правовые аспекты.: Дис. ... док. юрид. наук, Екатеринбург, 2000, էջ 123:

[16] Տե՛ս **Осин В.,** Правовые возможности борьбы с организованной преступностью // Советская юстиция. 1990, № 3, էջ 7:

քում հասկանալով հանցակցության երկու ձևերը՝ հանցանքի կատարումը մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության և նախնական համաձայնությամբ, իսկ երկրորդի դեպքում՝ հանցանքի կատարումը կազմակերպված խմբի և հանցավոր համագործակցության կողմից[17]: Որոշ հեղինակներ էլ խմբային և կազմակերպված հանցավորության տարանջատման հիմքում դնում են կազմակերպված հանցավորության այնպիսի տարբերակիչ առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ ներքին կազմակերպվածությունը, զինվածությունը, գաղտնիությունը, հակահիրավական կողմնորոշումը, հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությունը, կոռումպացված կապերի առկայությունը և այլն: Ըստ այդ հեղինակների՝ կազմակերպված հանցավորության հիմնական առանցքը ոչ այլ ինչ է, քան կազմակերպված և ինքնուրույն հանցավոր կառուցվածքների միջև հակասոցիալական և հակահիրավական հարաբերությունների պարտադիր առկայությունը, այսինքն՝ հարաբերություններ, որոնց նպատակը ոչ միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելն է, այլև հետագա հանցավոր գործունեություն ծավալելու համար նպաստավոր պայմանների ստեղծմանն ուղղված աշխատանքների համակարգումը[18]: Կազմակերպված հանցավոր գործունեության սեռային հատկանիշը, ըստ հեղինակների, հանցավոր կազմավորման կամ առանձին անհատների ներգրավվածությունն է որոշակի շրջանի կամ շրջանների սահմաններում գոյություն ունեցող միջխմբային հանցավոր կապերին: Եթե խմբային հանցավորության շրջանակներում առկա հարաբերությունների օբյեկտը հանցանքի նախապատրաստմանն ու կատարմանն ուղղված հանցակիցների համատեղ գործունեությունն է, ապա կազմակերպված հանցավորության դեպքում այդ գործունեությունն առավելապես ուղղված է հանցավոր ազդեցության ոլորտների բաժանմանը համաձայնեցման կամ ուժի կիրառման միջոցներով:

Վերոնշյալ դիրքորոշման կողմնակիցները, փաստորեն, կազմակերպված հանցավորության սահմաններում ընդգրկում են միայն

---

[17] Տե՛ս **Водько Н. П.,** Уголовно-правовая борьба с организованной преступностью: Научно-практическое пособие. М.: Юриспруденция, 2000, էջ 18:

[18] Տե՛ս **Кашелкин А. Б., Тихонов В. И.,** О методическом подходе к вопросу разграничения понятий групповой и организованной преступности // Вестник МВД России. 2003. N 4, էջ 61 – 64:

հանցավոր այն կազմավորումների գործունեությունը, որոնք համարվում են, այսպես կոչված, հանցավոր աշխարհի կանոնների կրողը և գտնվում են իրենց հանցավոր գործունեությամբ պայմանավորված որոշակի կայուն հակասոցիալական հարաբերությունների մեջ:

Փաստորեն, վերոնշյալ մոտեցման հիմքում ընկած ողջ տրամաբանությունն այն է, որ ներքին կազմակերպվածությամբ օժտված հանցավոր կազմավորումների գործունեությունը պետք է դիտարկվի խմբային հանցավորության շրջանակներում բոլոր այն դեպքերում, երբ այդպիսի կազմավորումներն ընդգրկված չեն որոշակի հանցավոր ազդեցության ոլորտում և այդ հակասոցիալական հարաբերությունների մասնակից չեն. միայն այդ հանցավոր կապերի մեջ գտնվող հանցավոր կազմավորումների գործունեությունն է, որ ընդգրկվում է կազմակերպված հանցավորության շրջանակներում: Այս մոտեցման պարագայում, ստացվում է, որ հանցակցության երկու ձևերն էլ՝ հանցանքի կատարումը կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից, կարող են դիտվել և՛ որպես խմբային, և՛ որպես կազմակերպված հանցավորություն այն պարզ պատճառով, որ քննարկվող հասկացությունների տարանջատման հիմքում դրվում է քրեաիրավական առումով նշանակություն չունեցող և արարքի որակման վրա չազդող չափանիշ:

Կարծում ենք, որ ինչպես խմբային հանցավորությունը, կազմակերպված հանցավորությունը ևս կրիմինալոգիայի տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում այնքանով, որքանով հանցավոր գործունեություն է ծավալվում ոչ թե մեկ անձի, այլ մի քանի անձանց խմբի կողմից՝ նրանց համագործակցության, համատեղ ջանքերի գործադրման հետևանքով: Թերևս այս հատկանիշն է, որ պայմանավորում է խմբի կազմում հանցանք կատարած անձանց բնութագիրը, այդ հանցագործությունները պայմանավորող գործոնները և այլն: Ճիշտ է, կազմակերպված հանցավորությունը՝ որպես սոցիալական երևույթ, աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով (կազմակերպվածություն, ենթակայության հարաբերություններ և այլն), որոնք, սակայն, այդ երևույթի էությունը չեն փոխում: Այլ կերպ ասած, այն բոլոր տարրերն ու հատկանիշները, որոնք բացահայտում են խմբային հանցավորության բովանդակությունը, ընկած են նաև կազմակերպված հանցավորության հասկացության հիմքում: Իսկ վերջինիս բնորոշ տարբերակիչ հատկանիշները կոչված են բացահայտելու

կազմակերպված հանցավորության՝ որպես խմբային հանցավորության հատուկ՝ առավել վտանգավոր տեսակի էությունը: Հետևաբար, կարծում ենք, որ կրիմինալոգիական հետազոտության շրջանակներում կազմակերպված հանցավորությունը պետք է դիտարկվի և ուսումնասիրվի՝ որպես խմբային հանցավորության մաս:

Այսպիսով, կատարված ուսումնասիրության հիման վրա թերևս կարելի է փաստել, որ խմբային հանցավորության և դրա քրեաիրավական դրսևորումների հարաբերակցության հիմնախնդիրը բավական բարդ է, և սրա հետ կապված մի շարք հարցեր կրիմինալոգիական գրականության մեջ շարունակում են վիճելի մնալ: Կարծում ենք, որ խնդրահարույց մի շարք հարցերի կապակցությամբ մեր կողմից առաջարկված լուծման տարբերակները կարող են նպաստել քրեական օրենսդրության կատարելագործմանը և խմբային հանցավորության դեմ պայքարի արդյունավետությանը:

Нина Пирумян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

ПРОБЛЕМА СООТНОШЕНИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ И ИНСТИТУТА СОУЧАСТИЯ

В рамках изучения групповой преступности как объекта криминологического исследования представляет интерес проблема соотношения групповой преступности и ее уголовно-правовых проявлений - форм соучастия. В связи с этим, автором были выявлены и изучены некоторые проблематичные вопросы, не нашедшие окончательного разрешения в науке криминологии. В частности, в статье автором были рассмотрены следующие вопросы: должно ли криминологическое исследование групповой преступности проводиться в рамках уголовно-правового регулирования? С криминологической точки зрения представляют ли интерес случаи совершения преступлений фактической группой лиц, т. е. случаи, выходящие за рамки уголовно-правового регулирования института соучастия? Понятие групповой преступности включает ли в себе все формы соучастия и, следовательно, проявления организованной преступности? Проводя анализ предложенных в криминологической литературе основных подходов по данным вопросам, автор сделал научно обоснованные выводы и выдвинул собственные варианты разрешения проблем.

Nina Pirumyan
PhD student of the YSU Chair of Criminal Law

THE PROBLEM OF CORRELATION BETWEEN THE GROUP CRIME AND THE INSTITUTE OF COMPLICITY

In the frames of criminological research of the group crime, the problem of the correlation between the group crime and its criminal forms (i.e. forms of complicity) becomes of great interest. In this regard, the author has identified and studied some problematic issues which have not yet been resolved in criminological science. In particular, the following questions have been discussed: should the group crime be an object of criminological research only within the framework of criminal regulation? From the criminological point of view, are the cases of committing crimes by factual groups of offenders of special interest (i.e. the cases that go beyond the criminal regulation of the institute of complicity)? Does the concept of the group crime cover all forms of complicity, including of organized crime? Analyzing the major approaches proposed in criminological literature, the author has drawn evidence-based conclusions and put forward her own visions of solving those problems.

Բանալի բառեր՝ *կրիմինալոգիա, խմբային հանցավորություն, կազմակերպված հանցավորություն, հանցավոր խումբ, հանցակցություն, համակատարում, միջնորդավորված կատարում:*
Ключевые слова: *криминология, групповая преступность, организованная преступность, преступная группа, соучастие, соисполнительство, посредственное исполнительство.*
Key words: *criminology, group crime, organized crime, criminal group, complicity, co-perpetration, indirect perpetration.*